ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
կնքված պայմանագրում կատարված փոփոխության մասին

Դատական դեպարտամենտը ստորև ներկայացնում է իր կարիքների համար ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05» ծածկագրով գնման ընթացակարգի արդյունքում 2019 թվականի օգոստոսի 06-ին կնքված N ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2 պայմանագրում 2019 թվականի դեկտեմբերի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը և կատարված փոփոխությունը պարունակող՝ երկկողմ հաստատված փաստաթղթի պատճենը:

Փոփոխության առաջացման պատճառ՝

Անհրաժեշտություն է առաջացել ավելացնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները:

Փոփոխության նկարագրություն՝

Պայմանագրի 4.1 կետում «2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինվել է «2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ» բառերով:

Փոփոխության հիմնավորում՝

Պայմանագրի 7.5 կետ:

Պատվիրատու՝ **Դատական դեպարտամենտ**

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ N 1

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ 06.08.2019թ. ԿՆՔՎԱԾ N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2» ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ք. Երևան

« 13 » դեկտեմբերի 2019թ.

Դատական դեպարտամենտը, ի դեմս ղեկավար Կ. Փոլադյանի, որը գործում է Դատական դեպարտամենտի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «ԱՎՏՈ ՓԱՐԹՍ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Պիվազյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, երկուսը միասին (այսուհետ՝ Կողմեր), ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, պահպանելով գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված պայմանները, և հիմք ընդունելով 06.08.2019թ. կնքված N «ԴԴ-ԳՀԾՁԲ-19/05-2» գնման պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) 7.5 կետը՝ փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն համաձայնագիրը՝ հետևյալի մասին.

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

Կողմերը որոշեցին ավելացնել Պայմանագրով նախատեսված ծառայությունների ծավալները, ինչով պայմանավորված՝ Պայմանագրի 4.1 կետում «2 700 000 (երկու միլիոն յոթ հարյուր հազար) ՀՀ դրամ» բառերը փոխարինել «2 970 000 (երկու միլիոն ինը հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ» բառերով:

2. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

2.1. Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2. Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի՝ Պայմանագրով նախատեսված իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3. Սույն համաձայնագիրը կազմված է 1 էջից, կնքվում է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, և յուրաքանչյուր Կողմին տրվում է մեկական օրինակ:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Դատական դեպարտամենտ	***«ԱՎՏՈ ՓԱՐԹՍ» ՍՊԸ***
Հասցե՝ ք. Երևան, Վազգեն Սարգսյան 5	Հասցե՝ ք. Երևան, Գայի պողոտա 12/2
ՀՎՀՀ՝ 900011192151	ՀՎՀՀ՝ 2472302323880000
ՀՎՀՀ՝ 02583241	ՀՎՀՀ՝ 00880859
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	«Կոմերցիոնբանկ» ՓԲԸ
Ղեկավար՝ Կ. Փոլադյան	Տնօրեն՝ Ա. Պիվազյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
L.S.	L.S.